ՀԱՅՐԵՆԱԿԱՆՔ

ԱՐՏՈՅՏՆԵՐ

Ով արտոյտնե՜ր, արտոյտնե՜ր հայրենական արտերի.
Ես չեմ գրել ձեր մասին դեռ ոչ մի երգ անթերի:

Շատ ենք խորհուրդ արել մենք՝ իմ սիրտն ու ես միասին,
Որ նստենք ու առանձին մի երգ գրենք ձեր մասին:

Բայց տեսել ենք, որ չունեմ ես ոչ մի երգ առանց ձեզ,
Իմ ամէն մի տողի տակ թռվռում էք դուք անտես:

Ցաճախ ինչ–որ առիթով եւ յաճախ էլ անառիթ
Բախւում էք ձեր թեւերով երգիս ամէն մի բառին:

Ինչի մասին էլ գրեմ եւ ինչպէս էլ գրեմ ես,
Ինչքան էլ ձեզ չկանչեմ ու չյիշեմ անգամ ձեզ,

Ոչ մի հնար չի լինում, մեր դաշտերից լայն ու պերճ
Գալիս էք ու թռիչքով մտնում էք իմ երգի մէջ:

ՀԱՄՕ ՍԱՀԵԱՆ

ԻՄ ՈՐՄՆԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՄԻՆ

Բիրտ, կոպիտ քարն էք մուրճերով տաշում,
Ցղկում, քանդակում կառուցման համար,
Շարում էք, շարում շէնքեր գեղաշուք,
Գրաւիչ, որպէս երկնքի կամար:

Պոէտն էլ ձեզ պէս մուրճերով մտքի
Բառերն է տաշում, կոկում, քանդակում
Եւ գեղակերտում շէնքերը երգի,
Ուր սիրտն ու միտքն են յաւերժ բնակւում:

Երկիրը թող շատ ունենայ, ընկե՛ր,
Ե՛ւ շքեղ շէնքեր, ե՛ւ անմեռ երգեր ...

ԱՇՈՏ ԳՐՍՇԻ

ԱՂԲԻՒՐԻ ՀԵՏ

Ողջո՜յն սարի զուլալ աղբիւր,
Իմ մանկութեան սրտակից,
Այսօր ես քեզ եկել եմ հիւր
Հեռո՜ւ, հեռո՜ւ քաղաքից:

Մի պահ թող ես հանգիստ առնեմ՝
Պառկած կանաչ եզերքիդ,
Ալեակներիդ ծաղիկ ցանեմ,
Դիտեմ ջրերդ յակինթ:

Մանուկ դառնամ, քեզ հետ խաղամ,
Շինեմ փայտէ ջրաղաց,
Ծերութեան ցաւը մոռանամ,
Լինեմ զուարթ, սրտաբաց:

ՍԱՐՄԷՆ

digitised by A.R.A.R.@